4. Նայիրի երկրի կենդրոնական մասի — Արարատեան երկրի վիշապազանց զարգացման դարում Ճորոխի Աւազանումն էլ զարգացել է Բազալտ քարի կոկելու, յղկելու եւ քանդակելու արհեստը, որը դարեր է տեւել Անահիտի, Միհրի եւ Արամազդի պաշտման շրջանով:

5. Սեւ Ծովի (Ամասիա–Կոլխիդայի) շրջանը. ոսկու, արծաթի, գործածութեան շրջանը նկատելի է Ճորոխի Աւազանում, որ երկար դարեր է տեւել:

6. Բագդատ–Բագրատների շրջանը. որ Ուրարտական շրջանից վաղ է գործել Ճորոխի Աւազանում եւ թողել է նշանաւոր հետքեր:

7. Միկենեան–Եգեան շրջանը. որի ժամանակ զարգացած է նուրբ արհեստները ինչպէս կաւային, նոյնպէս թանկագին մետաղների կերտուածներով:

8. Ասուրա–Ուրարտական ընդհարումների շրջանը:

9. Պարթեւ–Պահլաւների. — նախ եւ յետ Մակեդոնական շրջանը:

10. Քրիստոնէական գաղափարի. — Հէլլէն եւ Հռոմի մուտքը Ճորոխի Աւազանումը:

11. Քաղկեդոնիկ եւ Զրադաշտական քաղաքականութեան պայքարի շրջանը. եւ

12. Իսլամական յետադէմ եւ կործանարար շրջանը: